ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԱՆՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՕՆԱՆՅԱՆԻ
«ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ և ԶԱՐԴԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԺԷ.00.03 - «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, ԴԵԿՈՐԱՏԻՎ և ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ, ԴԻԶԱՅՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Աննա Օնանյանի «Սկիհի ծածկոցների պատկերագրական և զարդային առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է սկիհի ծածկոցների պատկերագրական և զարդային առանձնահատկություններով, որտեղ հեղինակն անդրադարձել է այդ ծածկոցների ծագմանը և կիրառությանը որպես եկեղեցական գույք, դրանց հիմնական գործառույթներին, խորհրդաբանությանը, արձանագրությունների բովանդակությանը և տեսակներին: Այս ուսումնասիրությունը միաժամանակ առնչվում է կրոնին և հավատքին, պատկերագրությանը, ասեղնագործությանը: Իրենց տարբեր աշխատանքներում հայագետ-հետազոտողները ներկայացրել են որոշ նմուշներ, այնուամենայնիվ այն յուրահատուկ ուսումնասիրություն է և որքան մեզ հայտնի է մինչ այժմ խորապես չի դիտարկվել:

Հետազոտությունում հեղինակը նպատակ է դրել արվեստաբանական վերլուծության ենթարկել հայ առաքելական եկեղեցու սկիհի ծածկոցների ընդհանուր հարդարանքը, մասնավորապես՝ պատկերագրությունը, և իր առջև խնդիր է դրել համակողմանիորեն ուսումնասիրել սկիհի ծածկոցների առաջացումը և առանձնացումը եկեղեցական մյուս գործվածքներից, անցկացնել համեմատական ուղղափառ և կաթոլիկ եկեղեցու ծածկոցների հետ, խմբավորել սկիհի ծածկոցները ըստ ստեղծման կամ նվիրաբերման վայրի, քննության առնել սկիհի ծածկոցների պատկերագրությունն ըստ բովանդակության, նկարագրել ասեղնագործված սյուժեներն առանձին-առանձին, ցույց տալ դրանց ազդեցության աղբյուրը, գտնել պատկերագրական սյուժեների և զարդանախշերի կապը սկիհի ծածկոցների խորհրդաբանության և կիրառության հետ, կարդալ և վերծանել

արձանագրությունները, դրանց միջոցով հասկանալ նվիրատվության նպատակը, ուսումնասիրել ծածկոցների գործվածքները, թելերի և զարդերի տեսակները, ծածկոցները դիտարկել որպես դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշ մի կողմից, իսկ մյուս կողմի՝ց որպես եկեղեցու ծիսակարգի (մասնավորապես սուրբ Պատարագի) անբաժան մաս:

Ատենախոսն իր աշխատանքում առաջին անգամ արվեստաբանական վերլուծության է ենթարկել դեկորատիվ-կիրառական արվեստի մաս կազմող սկիհի ծածկոցների պատկերագրությունը: Հեղինակը մատնանշում է, որ ատենախոսության մեջ ընդգրկված է սկիհի ծածկոցների մի չնչին մաս: Աննա Օնանյանը Հայաստանի և տարբեր երկրների թանգարաններից և մասնավոր հավաքածուներից, հրատարակված գրքերից և կատալոգներից գտել և ցուցակագրել է հարյուրից ավել սկիհի ծածկոց: Գրավոր աղբյուրների միջոցով ուսումնասիրել է սկիհի ծածկոցների առաջացման պատմությունը Հայաստանում, այդ ծածկոցների գործառույթները և նշանակությունը՝ որպես ծիսական գույք: Հայաստանի և արտերկրի միջնադարյան հուշարձանների քննությամբ ատենախոսն ուսումնասիրել է ծածկոցների պատկերների առկայությունը, որոնք հնարավորություն կտային պատկերացնելու, թե հատկապես որ դարից են դրանք օգտագործվել որպես առանձին միավոր: Նա ուսումնասիրել է կաթոլիկ և ուղղափառ եկեղեցու համանման նյութը, արել համեմատություն, ապա՝ քննության առել հայկական սկիհի ծածկոցների նախօրինակ հանդիսացող բյուզանդական ծածկոցները, դրանց պատկերագրությունը: Հավաքված նյութն ատենախոսը բաժանել է աշխարհագրական խմբերի՝ ըստ ստեղծման կամ նվիրաբերման վայրի, հիմք ընդունելով դրանց արձանագրությունները: Արձանագրություն կամ թանգարանում հստակ տեղեկություններ չունեցող նմուշներն Աննա Օնանյանը խմբավորել է առանձին:

Հետազոտության ընթացքում կիրառվել է արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդը, մասնավորապես՝ նկարագրական, ոճական, պատկերագրական, պատկերաբանական, տեխնիկա-տեխնոլոգիական նաև հարակից գիտությունների մեթոդները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից («Եկեղեցական ծիսական ծածկոցների տեսակները և կիրառությունը», «Հայաստանում ստեղծված սկիհի ծածկոցներ», «Հայկական գաղթավայրերում

ստեղծված սկիհի ծածկոցներ», «Անհայտ ծագման սկիհի ծածկոցներ», «Արձանագրությունները, ասեղնագործության նյութերը և տեսակները»), եզրակացություններից, օգտագործված նյութերը գրականության ցանկից և վերատպություններից կազմված հավելվածից:

Ներածության մեջ հանգամանալից հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը, բնորոշվում թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացվում հիմնահարցի հետազոտության նպատակն ու խնդիրները:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է եկեղեցական ծիսական ծածկոցների տեսակներին, դրանց ծագմանը: Բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում դիտարկված են եկեղեցական գործվածքների տեսակները՝ ծածկոցները, հատկապես մեզ հասած առաջին օրինակները և դրանց պատկերագրական ձևավորումները, ծածկոցների պատկերները հայ և արտասահմանյան արվեստում: Դիտարկվել են նաև Հայ առաքելական եկեղեցում կիրառվող ծածկոցները:

Աշխատության երկրորդ գլխում ներկայացված են Հայաստանում ստեղծված ծածկոցները: Երկու ենթագլուխներում նկարագրական մեթոդի հիման վրա դիտարկված են Հայաստանում ստեղծված ծածկոցների օրինակները, առաջին ենթագլխում Արևմտյան Հայաստանում, իսկ երկրորդ ենթագլխում՝ Արևելյան Հայաստանում: Երկրորդ գլխի վերջում ներկայացված է ծածկոցների պատկերագրական խմբերի համառոտ ակնարկ: Ծածկոցների առաջին խումբը զարդարված է կրոնական սյուժեներով, երկրորդ խումբը՝ կրոնական խորհրդանիշներով և զարդանախշերով, իսկ երրորդ խումբը՝ խառը խումբ, որտեղ ծածկոցների ձևավորումը բաղկացած է միաժամանակ կրոնական խորհրդանիշներից և սյուժեներից, ինչպես նաև զարդանախշերից:

Երրորդ՝ «Հայկական գաղթավայրերում ստեղծված սկիհի ծածկոցները» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Այստեղ ներկայացված են հայաշատ բնակավայրերում (Օսմանյան կայսրություն, Իրան, Ռումինիա և այլն) ստեղծված սկիհի ծածկոցները: Չնայած այն հանգամանքին, որ ծածկոցները ստեղծվել են Հայաստանից դուրս, դրանք ունեն նույն ձևավորումն ու պատկերագրական ոճը:

Չորրորդ՝ «Անհայտ ծագման սկիհի ծածկոցներ», գլխում հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել մի շարք ծածկոցներ, որոնց ստեղծման վայրն անհայտ է, ուստի դրանց մեծ մասը չունեն արձանագրություններ և թվական տվյալներ, դրանք ներկայացված են հայկական և արտասահմանյան թանգարաններում:

Ատենախոսության հինգերորդ՝ «Արձանագրությունները, ասեղնագործության նյութերը և տեսակները» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում ներկայացված են արձանագրությունների տեսակներն ու բովանդակությունը: Արձանագրություններն ունեն աղբյուրագիտական կարևոր նշանակություն, քանի որ դրանցում կան այն եկեղեցիների և տեղանքների անունները, որոնք այլևս գոյություն չունեն կամ ավերակների են վերածվել: Երկրորդ ենթագլխում ներկայացված են ասեղնագործության տեսակներն ու օգտագործվող նյութերը՝ վուշ, մետաքս, բամբակ, թանզիֆ, ատլաս: Ասեղնագործության տեսակները հիմնականում հայկական էին՝ Ուրֆայի, Այնթապի, Վանի ասեղնագործություն:

Բարձր գնահատելով ներկայացված ատենախոսությունը, ունենք հետևյալ դիտողություններն ու ցանկությունները.

1. Ատենախոսության ներածությունը ներկայացված է հասկանալի և բովանդակալից, մինչդեռ ատենախոսության էջ 3-ում նշված է «Թեման ուսումնասիրված չէ», սակայն ատենախոսը 6-9 էջերում ներկայացնում է հայագետ հետազոտողներ Գարեգին Հովսեփյանի, Սերիկ Դավթյանի, Մանյա Ղազարյանի, Արգամ Այվազյանի սկիհի ծածկոցներին նվիրված ուսումնասիրությունների հրատարակված աշխատանքները:
2. Ատենախոսն առաջին անգամ արվեստաբանական վերլուծության է ենթարկել դեկորատիվ-կիրառական արվեստի մաս կազմող սկիհի ծածկոցների պատկերագրությունը և կատարել է խորը մասնագիտական առումով հետաքրքիր հետազոտություն՝ տալով ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների սկիհի ծածկոցերի համեմատական բնութագիրը: Ցանկալի էր, որ անդրադարձ կատարվեր և տրվեր նաև էրիտրական քրիստոնեական եկեղեցու սկիհի ծածկոցների համեմատական բնութագիրը (էրիտրական այբուբենի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է և այդ ժողովրդի մի մասը դավանում է հայ առաքելական եկեղեցուն):
3. Ատենախոսությունում ներկայացված են թվով 16 եզրակացություններ, սակայն շահեկան կլիներ, որ աշխատանքն ավարտվեր առաջարկություններով, քանի որ առաջին անգամ է կատարված սկիհի ծածկոցների համալիր հետազոտություն, որն ունի նաև կիրառական ուղղվածություն:
4. Ատենախոսությունում և սեղմագրում նկատվել են ոչ հստակ շարադասությամբ նախադասություններ և բացթողումներ:

Վերոնշյալ դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Գիտական արժեքից բացի՝ աշխատանքն ունի նաև կիրառական ու գործնական կարևոր նշանակություն:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսության հեղինակը միանգամայն ունակ է ինքնուրույն հետազոտություն կատարելու և բնութագրվում է դրականորեն: Իր ամբողջության մեջ ատենախոսությունը հաջողված և ավարտուն է:

Արդյունքում՝ գտնում եմ, որ Աննա Սերգեյի Օնանյանի «Սկիհի ծածկոցների պատկերագրական և զարդային առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ. 00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Վիգեն ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

23 նոյեմբերի 2023թ.